



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 548 - Ա

20 հոկտեմբերի 2021 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հունվարի 23-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման մարզային հանձնաժողով ստեղծելու և մարզային հանձնաժողովի աշխատկարգը հաստատելու մասին» N 16-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.Ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մշտական գործող մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Նավոյան Ռուբիկ

- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ,
հանձնաժողովի նախագահ

Գալստյան Գևորգ

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության
փրկարար ծառայության Գեղարքունիքի
մարզային փրկարարական վարչության պետ,
հանձնաժողովի նախագահի տեղակալ
/համաձայնությամբ/

Մուշեղյան Յուրա

- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական
գարգացման վարչության պետ

Զոհրաբյան Արմեն

- մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

Պետրոսյան Մարտին

Զազյան Կարեն


Վարդանյան Լուսինե

Հարությունյան Վանիկ

Խաչատրյան Գևորգ

- մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
- մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության պետ
- մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
- մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
- մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ»:

20.10.2021


ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ